ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/20

ք. Գյումրի «17» փետրվարի 2020 թ.

«Ընտանիք»ՄՊՍԿ ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Մինասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Գյումրու գեղարվեստական սրահ» ՍՊԸ, ի դեմս Հ.Խաչատրյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/20

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ***10*** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***20*** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 229 860 /երկու հարյուր քսանինը հազար ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___2___ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Ընտանիք»ՄՊՍԿ ՊՈԱԿ	«Գյումրու գեղարվեստական սրահ»ՍՊԸ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2	ք. Գյումրի Կիրովի 1
ՀՎՀՀ 05504412	ՀՎհհ05524666
Հ/Հ 900018005554	հհ2472600004240000
Երևանի թիվ 1 ՏԳԲ	«Արդշինբանկ»ԲԲԸ
Տնօրեն՝ Ա. Մինասյան	Տնօրեն՝ Հ. Խաչատրյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 17» փետրվարի 2020 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/20 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

համարակ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /՝/ դրամ	ընդհանուր գինը /՝/ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման			
								հասցեն	ենթակա քանակն ըստ ամիսների			
									2	4	8	10
		Գործիքներ , փականներ , բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ										
1	44511260	Հղկաթուղթ №200 /ոսկերչի/	Հղկաթուղթ № 200, թերթի չափը՝ 23x28 սմ Արդյունավետ է մետաղների վերամշակման համար	թերթ	300	4200	14	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	3	3	3
2	44511260	Հղկաթուղթ №600 /ոսկերչի/	Հղկաթուղթ № 600, թերթի չափը՝ 23x28 սմ Արդյունավետ է մետաղների վերամշակման համար	թերթ	300	4200	14	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	3	3	3
3	44511260	Հղկաթուղթ №800 /ոսկերչի/	Հղկաթուղթ № 800, թերթի չափը՝ 23x28 սմ Արդյունավետ է մետաղների վերամշակման համար	թերթ	300	3900	13	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	3	2	3
4	44511260	Հղկաթուղթ №1000 /ոսկերչի/	Հղկաթուղթ № 1000, թերթի չափը՝ 23x28 սմ Արդյունավետ է մետաղների վերամշակման համար	թերթ	300	3900	13	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	3	2	3
5	44511343	Գայլիկոն 0.6 մմ	Գայլիկոն Р18, տրամագիծը 0.6մմ	հատ	250	2250	9	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	2	2	2
6	44511343	Գայլիկոն 0.8 մմ	Գայլիկոն Р18, տրամագիծը 0.8 մմ	հատ	250	2250	9	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	2	2	2
7	44511343	Գայլիկոն 1.0 մմ	Գայլիկոն Р18, տրամագիծը 1.0 մմ	հատ	250	2250	9	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	2	2	2
8	44511343	Գայլիկոն 1.2 մմ	Գայլիկոն Р18, տրամագիծը 1.2 մմ	հատ	250	2250	9	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	2	2	2
9	44511400	Շաղափ Φ 1.5մմ	Շաղափ Φ 1.5մմ	հատ	400	800	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		1	
10	44511400	Շաղափ Φ 2.5մմ	Շաղափ Φ 2.5մմ	հատ	400	800	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	1		
11	44511400	Շաղափ Φ 3 մմ	Շաղափ Φ 3 մմ	հատ	180	360	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	1		

12	44511400	Շաղափ Փ 4մմ	Շաղափ Փ 4մմ	հատ	280	560	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
13	44511400	Շաղափ Փ 6մմ	Շաղափ Փ 6մմ	հատ	600	1200	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
14	44511320	Նրբասղոց /ոսկերչի 12հատ/ № 4.0	Նրբասղոց /ոսկերչի 12հատ/ № 4.0: Նախատեսված է նուրբ սղոցման գործողություններ կատարելու համար	հատ	1200	14400	12	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	3	4	2
15	44511320	Նրբասղոցի սղոցիկներ /մետաղի/ /12հատ/	Նրբասղոց /ոսկերչի 12հատ/ № : Նախատեսված է նուրբ սղոցման գործողություններ կատարելու համար	կապ	1200	8400	7	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	1	1	3
16	44511220	Հալքանոթ Փ-55մմ	Թրծված բարձր ջերմակայունությամբ կավից տարա մետաղը հալեցնելու համար Փ-55մմ, բարձրությունը՝ 22մմ	կապ	400	4400	11	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	4	2	2	3
17	44511400	Նրբախարտոց ոսկերչական /5հատ/	Նրբախարտոցները օգտագործվում են խարտման աշխատանքների ժամանակ, տարբեր պրոֆիլների /կլոր, կիսակլոր, քառակուսի, եռանկյուն, տափակ, օվալ/ /№-0-3/	հատ	3500	10500	3	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2		1	1	1
		Ընդամենը				**66620**						
	Հաստոցների մասեր և պարագաներ											
18	42671180	Խոզանակ արույրից Փ-22մմ	Մետաղական սկավառակի վրա ամրացված՝ կլոր,պողպատից մանրաթելերով /6մմ երկարությամբ և 0,08մմ տրամագծով/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար տրամագիծը 20մմ	հատ	500	6500	13	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	4	3	2	4
19	42671180	Խոզանակ պողպատից Փ-20մմ	Մետաղական սկավառակի վրա ամրացված՝ կլոր,մազե սպիտակ փափուկ մանրաթելերով /7մմ երկարությամբ և 0,08մմ տրամագծով/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար	հատ	700	7700	11	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	4	3	1	3

20	42671180	Խոզանակ մազե Փ-26մմ	Պլաստմասսայից սկավառակի վրա ամրացված՝ կլոր,մազե փափուկ մանրաթելերով/ 12մմ երկարությամբ, 4շարք/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար տրամագիծը 60մմ	հատ	500	4500	9	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	4	2	2	1
21	42671180	Խոզանակ /խիտ/ Փ-60մմ	Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /բամբակյա փափուկ/Փ-24մմ ամրացված մետաղական հիմքի /Փ-10մմ/ վրա	հատ	2500	5000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
22	42671180	Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-24մմ	Ամրացված մետաղական հիմքի վրա:Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /թաղիքե կոշտ/ հաստությունը՝ 7մմ, տրամագիծը՝ 25մմ	հատ	500	5000	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	3	1	3
23	42671180	Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-25մմ	Ամրացված մետաղական հիմքի վրա:Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /թաղիքե կոշտ/ հաստությունը՝ 7մմ, տրամագիծը՝ 80մմ	հատ	500	4500	9	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	3	1	3
		Ընդամենը				**33200**						
		Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, պեմզա, կորունդ, բնական հղկաքար, այլ հանքանյութեր և թանկարժեք մետաղներ										
24	14521200	Արծաթ /Ag/	Նախատեսված է զոդանյութ և զարդեր պատրաստելու համար 999,9% : Սպիտակ, փափուկ մետաղ է, խտությունը՝ 10,50 գ/սմ³, հալման ջերմաստիճան 960,5 °C, կարծրությունը՝ 25 կգուժ/մմ²	գրամ	320	12800	40	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	20		10	10
		Ընդամենը				**12800**						

		Մետաղյա հանքաքարեր և համաձուլվածքներ										
25	14611120	Արույր	Պղնձի հիմքի վրա երկու կամ ավելի բաղադրիչներից ստացված համաձուլվածք է, որում լեգիրացնող հիմնական տարր է հանդիսանում ցինկը: Խտությունը՝ 8300÷8700 կգ/մ3 Տեսակարար ջերմունակությունը որ 20 °C-ի դեպքում՝ 0,377 կՋ·կգ–1·Կ–1 Տեսակարար էլեկտրական դիմադրությունը՝ (0,07-0,08)×10–6 Օհմ·մ Արույրի հալման ջերմաստիճանը բաղադրությունից կախված հասնում է 880—950 °C. Ցինկի պարունակության մեծացման հետ հալման ջերմաստիճանն իջնում է:	կգ	4000	8000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	0,5		0,5
		Ընդամենը				**8000**						
		Հղկանյութեր										
26	14810000	ման մածիկ /քրոմ	Կանաչ գույնի պինդ նյութ, նախատեսված է ոսկերչական իրերը փայլեցնելու համար 50գ	հատ	1800	7200	4	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2		1	1
		Ընդամենը				**7200**						
		Հիմնական անօրգանական քիմիական նյութեր										
27	24311112	Բուռա	Նատրիումի տետրաբորաթթու: Սպիտակ փոշիանման նյութ, նախատեսված է օգտագործել հալման, զոդման ժամանակ 50գ	փաթեթ	200	840	4,2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,2		2	2
28	24311112	Բոռաթթու 50գր	Սպիտակ բյուրեղանման նյութ: Օգտագործվում է զոդման աշխատանքների և բուռաջուր ստանալու համար 50գ	փաթեթ	200	600	3	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		1	1
29	24310000	Ֆլյուս 30գր	Սպիտակ փոշիանման նյութ, նախատեսված է օգտագործել հալման, զոդման ժամանակ 30գ	փաթեթ	1000	4000	4	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	1	1	
		Ընդամենը				**5440**						
		Կենդանական ծագման և հարակից										
30	03142400	Մեղրամոմ 22գր	Պինդ նյութ, նախատեսված է օգտագործել ոսկերչության մեջ շաղափման, լարածգման ժամանակ 22գ	հատ	300	600	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	1		
		Ընդամենը				**600**						

		Կավ և Ճենակավ										
31	14221100	Կավ/սպիտակ/ 12կգ	Սպիտակ, հրակայուն, փափուկ, պլաստիկությամբ օժտված նստվածքային ապար, որը նախատեսված է խեցեգործական իրեր, քանդակներ ծեփելու համար, թրծվում է 1230°-1270°C: /Կաոլին/	տուփ	8000	48000	6	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	2	1	1
32	14221100	Կավ/կարմիր/ 12կգ	Կարմիր, հրակայուն, փափուկ, պլաստիկությամբ օժտված նստվածքային ապար, որը նախատեսված է խեցեգործական իրեր, քանդակներ ծեփելու համար, թրծվում է 600°-900°C:	տուփ	8000	48000	6	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	2	1	1
		Ընդամենը				**96000**						

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո ժամանակացույցով նշված ամիսների համար մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը:

Ապրանքի քանակի և մատակարարման ժամկետի, փոփոխում կարող է կատարվել Պատվիրատուի կողմից նման առաջարկ ստանալու դեպքում:

ԳՆՈՐԴ

«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
տնօրեն՝ Ա. Մինասյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Գյումրու գեղարվեստական սրահ» ՍՊԸ
ք. Գյումրի Կիրովի 1
ՀՎՀՀ 05524666
Հ/Հ 2472600004240000
«Արդշինբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ
Տնօրեն՝ Հ.Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև նախագիծը մատակարարին ուղարկելը:*

Հավելված N 2
« 17» փետրվարի 2020 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի															
համարը	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-17	44500000	Գործիքներ, փականներ, բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ		18460	18460	33740	33740	33740	33740	49440	49440	66620	66620	66620	66620
18-23	42670000	Հաստոցների մասեր և պարագաներ		11800	11800	19400	19400	19400	19400	23100	23100	33200	33200	33200	33200
24	14520000	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, պեմզա, կորունդ,բնական հղկաքար, այլ հանքանյութեր, թանկարժեք մետաղներ		6400	6400	6400	6400	6400	6400	9600	9600	12800	12800	12800	12800
25	14600000	Մետաղյա հանքաքարեր և համաձուլվածքներ		4000	4000	6000	6000	6000	6000	6000	6000	8000	8000	8000	8000
26	14810000	Հղկանյութեր		3600	3600	3600	3600	3600	3600	5400	5400	7200	7200	7200	7200
27-29	24310000	Հիմնական անօրգանական քիմիական նյութեր		2240	2240	3240	3240	3240	3240	4480	4480	5440	5440	5440	5440
30	03142400	Մեղրամոմ		300	300	600	600	600	600	600	600	600	600	600	600
31-32	14220000	Կավ և ճենակավ		32000	32000	64000	64000	64000	64000	80000	80000	96000	96000	96000	96000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Ընտանիք»ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու գեղարվեստական սրահ» ՍՊԸ
ք. Գյումրի Կիրովի 1
ՀՎՀՀ05524666
հհ2472600004240000
«Արդշինբանկ»ԲԲԸ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«17» փետրվարի 2020 թ. կնքված
ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Գյումրու գեղարվեստական
սրահ» ՍՊԸ
ք. Գյումրի Կիրովի 1
հհ2472600004240000
«Արդշինբանկ»ԲԲԸ
Հվհհ05524666
Տնօրեն

_____ Հ. Խաչատրյան

Պատվիրատու
«Ընտանիք» ՄՊՄԿՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
հհ900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հվհհ05504412
Տնօրեն

_____ Ա. Մինասյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«20» «փետրվարի» 2020 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «17» «փետրվարի» 2020թ.

Պայմանագրի համարը՝ ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 06/20

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «20» «փետրվարի» 2020թ. դուրս գրված N Բ5412146217 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազարդրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարմանժամանակացույցի/
			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմգրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1.	Արծաթ 99,9%	Արծաթ 99,9%	20	20	29.02.2020	20.02.2020	6,40	30.04.2020
2.	Արույր	Արույր	1	1	29.02.2020	20.02.2020	4,00	30.04.2020
3.	Խոզանակ արույրից Փ-22մմ	Խոզանակ արույրից Փ-22մմ	4	4	29.02.2020	20.02.2020	2,00	30.04.2020
4.	Խոզանակ պողպատից Փ-20մմ	Խոզանակ պողպատից Փ-20մմ	4	4	29.02.2020	20.02.2020	2,80	30.04.2020
5.	Խոզանակ մազե Փ-26մմ	Խոզանակ մազե Փ-26մմ	4	4	29.02.2020	20.02.2020	2,00	30.04.2020
6.	Խոզանակ /խիտ/ Փ-60մմ	Խոզանակ /խիտ/ Փ-60մմ	1	1	29.02.2020	20.02.2020	2,50	30.04.2020
7.	Նրբասղոց /ոսկերչի	Նրբասղոց /ոսկերչի 12հատ/	3	3	29.02.2020	20.02.2020	3,60	30.04.2020

	12հատ/ №0.8մմ	№0.8մմ						
8.	Հալքանոթ /արծաթի/ №3	Հալքանոթ /արծաթի/ №3	4	4	29.02.2020	20.02.2020	1,60	30.04.2020
9.	Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-24մմ	Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-24մմ	3	3	29.02.2020	20.02.2020	1,50	30.04.2020
10	Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-25մմ	Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-25մմ	2	2	29.02.2020	20.02.2020	1,00	30.04.2020
11.	Գայլիկոն Փ-0.6մմ	Գայլիկոն Փ-0.6մմ	3	3	29.02.2020	20.02.2020	0,75	30.04.2020
12.	Գայլիկոն Փ-0.8մմ	Գայլիկոն Փ-0.8մմ	3	3	29.02.2020	20.02.2020	0,75	30.04.2020
13.	Գայլիկոն Փ-1.0մմ	Գայլիկոն Փ-1.0մմ	3	3	29.02.2020	20.02.2020	0,75	30.04.2020
14.	Գայլիկոն Փ-1.2մմ	Գայլիկոն Փ-1.2մմ	3	3	29.02.2020	20.02.2020	0,75	30.04.2020
15.	Հղկաթուղթ №200 23x28 սմ	Հղկաթուղթ №200 23x28 սմ /արծաթագործության/	5	5	29.02.2020	20.02.2020	1,50	30.04.2020
16.	Հղկաթուղթ №600 23x28 սմ	Հղկաթուղթ №600 23x28 սմ /արծաթագործության/	5	5	29.02.2020	20.02.2020	1,50	30.04.2020
17.	Հղկաթուղթ №/800 23x28 սմ	Հղկաթուղթ №/800 23x28 սմ /արծաթագործության/	5	5	29.02.2020	20.02.2020	1,50	30.04.2020
18	Հղկաթուղթ №1000 23x28 սմ	Հղկաթուղթ №1000 23x28 սմ /արծաթագործության/	5	5	29.02.2020	20.02.2020	1,50	30.04.2020
19.	Ֆլյուս 50գ	Ֆլյուս 50գ	2	2	29.02.2020	20.02.2020	2,00	30.04.2020
20	Ողորկման մածիկ /քրոմ 50գր/	Ողորկման մածիկ /քրոմ 50գր/	2	2	29.02.2020	20.02.2020	3,60	30.04.2020
21.	Բուռա	Բուռա	0,2	0,2	29.02.2020	20.02.2020	0,04	30.04.2020
22	Բորաթթու 125գ	Բորաթթու 125գ	1	1	29.02.2020	20.02.2020	0,20	30.04.2020
23	Մեղրամոմ 22գ	Մեղրամոմ 22գ	1	1	29.02.2020	20.02.2020	0,30	30.04.2020
24	Նրբասղոցի սղոցիկներ /մետաղի//12հատ/	Նրբասղոցի սղոցիկներ /մետաղի//12հատ/	2	2	29.02.2020	20.02.2020	2,40	30.04.2020

25	Շաղափ Φ 1.5մմ	Շաղափ Φ 1.5մմ	1	1	29.02.2020	20.02.2020	0,40	30.04.2020
26	Շաղափ Φ 2.5մմ	Շաղափ Φ 2.5մմ	1	1	29.02.2020	20.02.2020	0,40	30.04.2020
27	Շաղափ Φ 3 մմ	Շաղափ Φ 3 մմ	1	1	29.02.2020	20.02.2020	0,18	30.04.2020
28	Շաղափ Φ 4մմ	Շաղափ Φ 4մմ	1	1	29.02.2020	20.02.2020	0,28	30.04.2020
29	Շաղափ Φ 6մմ	Շաղափ Φ 6մմ	1	1	29.02.2020	20.02.2020	0,60	30.04.2020
30	Կավ/սպիտակ / 12կգ	Կավ/սպիտակ/ 12կգ	2	2	29.02.2020	20.02.2020	16,00	30.04.2020
31	Կավ/կարմիր/ 12կգ	Կավ/կարմիր/ 12կգ	2	2	29.02.2020	20.02.2020	16,00	30.04.2020

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Հ. Խաչատրյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

ստորագրություն

Ա. Պետրոսյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
20	Փետրվար	2020 թ.		Բ	5412146217
[4] Առաքման ամսաթիվ					
20	Փետրվար	2020 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)
[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	5	5	2	4	6	6	6		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	«ԳՅՈՒՄՐՈՒ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՐԱՀ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները	<<Արդշինբանկ>> ԲԲԸ	N 2472600004240000								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Կիրովի 1									
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Կիրովի 1									
[14] Լրացուցիչ տվյալներ										

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի										
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	5	5	0	4	4	1	2		
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԸՆՏԱՆԻՔ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)									
[18] Բանկային տվյալները		N								
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2									
[20] Լրացուցիչ տվյալներ										
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	ինքնատար									
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2									

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Արծաթ 99,9%	գ	20	320		6400		
2	Արույր	կգ	1	4000		4000		
3	Խոզանակ արույրից Փ-22մմ	հատ	4	500		2000		
4	Խոզանակ պողպատից Փ-20մմ	հատ	4	700		2800		
5	Խոզանակ մագե Փ-26մմ	հատ	4	500		2000		
6	Խոզանակ /խիտ/ Փ-60մմ	հատ	1	2500		2500		
7	Նրբասղոց /ռսկերչի 12հատ/ №0.8մմ	կապ	3	1200		3600		
8	Հալքանոթ /արծաթի/ №3	հատ	4	400		1600		
9	Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-24մմ	հատ	3	500		1500		

10	Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-25մմ	հատ	2	500		1000		
11	Գայլիկոն Փ-0.6մմ	հատ	3	250		750		
12	Գայլիկոն Փ-0.8մմ	հատ	3	250		750		
13	Գայլիկոն Փ-1.0մմ	հատ	3	250		750		
14	Գայլիկոն Փ-1.2մմ	հատ	3	250		750		
15	Հղկաթուղթ №200 23x28 սմ /արծաթագործության/	հատ	5	300		1500		
16	Հղկաթուղթ №600 23x28 սմ /արծաթագործության/	հատ	5	300		1500		
17	Հղկաթուղթ №/800 23x28 սմ /արծաթագործության/	հատ	5	300		1500		
18	Հղկաթուղթ №1000 23x28 սմ /արծաթագործության/	հատ	5	300		1500		
19	Ֆլյուս 50գ	փաթեթ	2	1000		2000		
20	Ողորկման մածիկ /քրոմ 50գր/	հատ	2	1800		3600		
21	Բուռա	կգ	0.2	200		40		
22	Բորաթթու 125գ	փաթեթ	1	200		200		
23	Մեղրամոմ 22գ	հատ	1	300		300		
24	Նրբասղոցի սղոցիկներ /մետաղի//12հատ/	տուփ	2	1200		2400		
25	Շաղափ Փ 1.5մմ	հատ	1	400		400		
26	Շաղափ Փ 2.5մմ	հատ	1	400		400		
27	Շաղափ Փ 3 մմ	հատ	1	180		180		
28	Շաղափ Փ 4մմ	հատ	1	280		280		
29	Շաղափ Փ 6մմ	հատ	1	600		600		
30	Կավ/սպիտակ/ 12կգ	տուփ	2	8000		16000		
31	Կավ/կարմիր/ 12կգ	տուփ	2	8000		16000		
Ընդամենը						78800		

Առաքող՝ **KHACHATRYAN HRACH 2510620418**

(անունը, ազգանունը)

Ստացող **MINASYAN ARTUR 2505620598**

(անունը, ազգանունը)

20/02/2020 17:24:50

24/02/2020 15:36:07